

ԼԻԱՐՇԵՔ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԱՄԲՈՂՋ ԳՈՐԾԼՆԹԱՅԸ ՎԵՐԱՀՄԿԵԼՈՒ

Հարցազրույց ԿԸՀ նախագահ ՏԻԳՐԱՆ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻ հետ

-Մեր ընտրողների մի մասը ունի ID քարտ, մյուսը՝ ե՛ւ ID, ե՛ւ սովորական անձնագիր, կան մարդիկ, որոնք այս երկուսից բացի ունեն նաև կենսաչափական անձնագիր: Չե՞ք կարծում, որ անձը հաստատող միասնական փաստաթղթի բացակայությունը լուրջ խառնաշփոթ է ստեղծում ընտրությունների ժամանակ:

-Փոքր-ինչ հեռվից գամ. ներդնելով նույնականացման քարտերի համակարգը՝ կատարվեց արմատական բարեփոխում: Ե՛վ ID քարտը, ե՛ւ կենսաչափական անձնագիրը համարվեցին անձը հաստատող փաստաթղթեր: Սակայն ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիների անձնագրերի փոխարինումը նույնականացման քարտերով մեկ օրում չէր կարող կատարվել, հնարավոր չէր, որ մարդիկ մի օր արթնանային ու տեղեկանային, որ այլևս չունեն անձնագրեր, որ հին նմուշի անձնագրերը չեղարկված են:

Նման մեծ բարեփոխումը չի կարող ընթանալ հեղափոխական ճանապարհով, այն տեւական գործընթաց է, այսինքն՝ անձնագրերի փոխարինումը նույնականացման քարտերով պետք է կատարվի աստիճանաբար: Հետևաբար բնական է, որ մեր քաղաքացիները միաժամանակ ունենան ե՛ւ ID քարտ, ե՛ւ անձնագիր, ե՛ւ երկուսն էլ միասին:

Հիմա, խնդիրն այն է, թե ինչպե՞ս վարվենք քվեարկության ժամանակ: Ընտրական օրենսգիրքը, «Նույնականացման քարտերի մասին» օրենքը ամրագրում են, որ ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ համարվում է անձնագիրը: Որեւէ նշում չկա նույնականացման քարտերի մասին: Ավելին՝ ID քարտը անձը հաստատող փաստաթուղթ է բոլոր իրավահարաբերություններում՝ բացառությամբ քվեարկության մասնակցելուց:

Ի՞նչ է ստացվում. անձը ՏԻՄ կամ համապետական ընտրություններում որպես թեկնածու գրանցվելիս իրավունք ունի ID քարտ ներկայացնել, մինչդեռ նույն անձը իրավունք չունի այդ քարտով մասնակցել քվեարկության:

-Եվ այստեղ է, որ կանգնում ենք խնդրի առաջ. անցած ՏԻՄ ընտրությունների ժամանակ ID քարտ ունեցող մի քանի հազար քաղաքացի գրկվեց քվեարկելու իրավունքից:

-Այո, եւ հենց սրանով հիշյալ նորմը բավական վիճելի է: Այսինքն՝ քաղաքացին գնում է ընտրատեղամաս, ունի ID քարտ՝ որպես անձը հաստատող փաստաթուղթ, բայց օրենքը նրան թույլ չի տալիս նույնականացման քարտով քվեարկություն կատարել:

-Ուրեմն ի՞նչ անել. այսօր կա 180 հազար մարդ, որ ունի ID քարտ, չունի անձնագիր. խորհրդարանը երեք օր շարունակ քննարկեց՝ ի՞նչ լուծում տալ, որ մի կողմից, չտոնահարվի նրանց ընտրության իրավունքը, մյուս կողմից՝ ինչպե՞ս վերահսկել ID քարտերով կատարված ընտրությունը, քանի որ պլաստիկ քարտի վրա որեւէ նշում անել հնարավոր չէ, ինչը համարվում է կրկնաքվեարկության նպաստավոր սողանցք:

-Նախ՝ ընտրողը պետք է իրավունք ունենա նույնականացման քարտով, որը անձը հաստատող փաստաթուղթ է, մասնակցել քվեարկությանը: Այստեղ կարծես թե վեճ չկա:

Խնդիրը հետեւյալն է. ինչպե՞ս կազմակերպել նույնականացման քարտերով քվեարկություն,

որ դա չտա խախտումներ կատարելու հնարավորություն: Արդյոք ID քարտով քվեարկության պարագայում ռիսկեր առաջանում են, թե՞ ոչ:

Այստեղ ամենակարեւորը ընտրացուցակներն են, որոնք կազմվում են ըստ ընտրողների հաշվառման վայրի: Դրանք քվեարկությունից 40 օր առաջ հրապարակվում ու կախվում են տեղամասերում: Ցուցակները միշտ կան ԿԸՀ կայքում, յուրաքանչյուրը կարող է այցելել կայք եւ տեղեկություններ ստանալ ինչպես իր անձի, այնպես էլ ցանկացածի մասին: Որոնման մեխանիզմով էլ մեր կայքում կգտնեք այն տեղամասային կենտրոնը որտեղ տվյալ անձը պետք է կատարի իր քվեարկությունը: Այս կերպ յուրաքանչյուրը կարող է ուսումնասիրել, հետազոտել ցուցակների տվյալները:

-Այսինքն՝ բացառում եք մեկ անձի՝ մի քանի ընտրատեղամասերում ընդգրկված լինելու հանգամանքը:

-Սկզբունքորեն բացառում են, որովհետեւ ընտրացուցակները ոչ թե ձեռքով են կազմվում, գրավոր շարադրվում, այլ կազմվում են լիազոր մարմնի կողմից՝ հատուկ ծրագրով: Եվ սա բացառում է նույն անձի տվյալների գրանցումը տարբեր ցուցակներում:

-Սա նշանակում է, որ բացառում եք կրկնաքվեարկությունը:

-Բացառում ենք այն, որ նույն անձը կարող է լինել երկու տարբեր տեղամասերի ցուցակներում: Վստահված անձինք, դիտորդները՝ բոլորն իրենց ձեռքում կարող են ունենալ ներբեռնված ցուցակները, կկատարեն անհրաժեշտ նշումներ: Լիարժեք հնարավորություն կա ամբողջ գործընթացը վերահսկելու:

Այս առումով կարեւոր նշանակություն ունի նաեւ տեղամասային հանձնաժողովների կազմավորումը: Խորհրդարանում ներկայացված խմբակցությունները կարող են մեկական ներկայացուցիչ ունենալ, նաեւ հանձնաժողովի նախագահների ու քարտուղարների պաշտոններում առաջադրել իրենց ներկայացուցիչներն: Բացի դրանից, հանձնաժողովի երկու անդամների միջեւ պետք է առանձնացված լինի աշխատատեղ վստահված անձի համար: Առավելությունն այստեղ տրվում է ընդդիմության վստահված անձին:

Հիմա, ընտրատեղամաս ներկայացած ընտրողը նախ ներկայացնում է իր անձնագիրը, ցուցակներով ստուգվում են նրա տվյալները, ընտրողն իր անվան դիմաց ստորագրում է, իսկ հանձնաժողովի անդամը դրոշմակնիքում, որից հետո անձը ստանում է քվեաթերթիկ ու մտնում քվեարկության, ծրարը քվեատուփի մեջ գցելու պահին ընտրողի անձնագրում ստուգվում է դրոշմակնիքի առկայությունը: Այսինքն՝ մինչ դրոշմակնիքին հասնելը բազմաթիվ ստուգման մեխանիզմներ են կիրառվում:

Այս ամենը մանրամասնորեն նկարագրեցի, որպեսզի պարզ դառնա, թե ընտրողը ինչպիսի գործընթացի միջով է անցնում: Ու եթե նման իրավիճակում նույն անձը փորձի կրկին մտնել այդ տեղամաս, ապա իր անվան դիմաց կտեսնի սեփական ստորագրությունը: Ուրեմն նրան ինչպե՞ս կարող են քվեաթերթիկ տալ: Բնականաբար խնդիրը փակվում է:

-Նման մեխանիզմի դեպքում փաստորեն անհնար է դառնում ID քարտերի վրա նշում անելը: Չնայած ընդդիմությունը շարունակում է պնդել, եթե ID քարտը հնարավոր չէ դրոշմակնիքել, ապա գոնե պետք է դալել:

- Երբ խոսում ենք ընտրական գործընթացներում ինչ-որ տեխնիկական միջոց ներդնելու մասին, պետք է լիարժեք պատկերացնել ու գնահատել բոլոր հնարավոր ռիսկերը: Եթե հանկարծ ներդրված միջոցը քվեարկության ընթացքում ինչ-ինչ պատճառներով, թեկուզ 5 րոպեով, խափանվի, ու չլինի այլընտրանքային լուծում, ապա դա կարող է առաջացնել ավելի մեծ անվստահություն: Բոլորի համար պարզ է, որ ID քարտն ունի այլ կառուցվածք, դրա վրա

դրոշմակնիք հնարավոր չէ դնել, որովհետև ձեռքով հնարավոր կլինի դա մաքրել: Այսինքն՝ դրոշմակնքման մեխանիզմը դուրս է գալիս:

Դառնամ մյուսին. ոչ մի կերպ չեմ կարողանում պատկերացնել՝ ի՞նչ է նշանակում դակել պլաստիկ քարտը: Նման առաջարկ անելիս նախ պետք է հասկանալ՝ կա՞ն նման սարքեր: Կարելի է ամեն ինչի մասին մտածել, խոսել, բայց այլ բան է ասվածն իրականացնելը: Եթե որոշենք մտցնել դակելու մեխանիզմը, իսկ հետո պարզվի, որ դա հնարավոր չէ իրականացնել, պարզ չէ՞, որ դա կդառնա անվստահության ավելի մեծ գործիք:

-Իսկ ի՞նչ կասեք մատը թանաքոտելու առաջարկի մասին, ինչի շուրջ, ի դեպ, անգամ մասնատված ընդդիմադիրները կոնսուլիադացան, ասում են՝ դա կնպաստի վստահության մեծացմանը, ուրեմն հանուն դրա կարելի է մի քիչ էլ թանաքոտվել:

-Մենք ուսումնասիրել ենք մի շարք երկրների փորձը, նաև խնդրեցինք ու Վրաստանից ստացանք թանաքանյութի այն նմուշը, որ կիրառել էին իրենց ընտրությունների ժամանակ. դա տեղական արտադրանք չէր, վրացիները ձեռք էին բերել արտերկրից:

Սակայն այդ նյութի կիրառումը պարզեց երկու բան. նախ այն, որ կենցաղային շփման ժամանակ թանաքանյութն անցնում է ձեռքից ձեռք, այսինքն՝ քվեարկություն կատարած մարդը, երբ հետո բարեւում էր մեկ ուրիշին՝ դեռ քվեարկությունը չկատարած քաղաքացու, իր թանաքանյութը փոխանցում է նրան:

Երկրորդ՝ համացանցում կարող էք գտնել տեղեկատվություն, թե ինչպես թանաքանյութը հեռացնել ձեռքից. նշվում են կենցաղային տարբեր նյութեր, անգամ սովորական ձեթը:

Այստեղ մի բան հիշեցնեմ, երբ մենք անցած ընտրությունների ժամանակ անձնագրերում կիրառեցինք դրոշմակնքումը, համացանցում տարածվեց մի տեսանյութ, թե ինչպես մարդը նստած թաց անձեռոցիկով իր անձնագրի էջից մաքրում էր դրոշմակնիքն ու դատողություններ անում, թե տեսե՞ք՝ որքան հեշտությամբ հնարավոր է կնիքը հեռացնել անձնագրից, ուրեմն կրկնաքվեարկությունը դրանով չի կանխվում:

Հիմա մենք արդեն այդ փորձը ունենք. եթե մարդն իր սեփական անձնագրի հետ կարող է նման կերպ վարվել, պարզ է, որ շատ հեշտությամբ կարող է թանաքոտ ձեռքը լվանալ տարբեր նյութերով ու հայտարարել, թե դա չի կարող կանխել կրկնաընտրությունը, որովհետև հեշտությամբ մաքրվում է: Ուրեմն ինչպե՞ս կարող է այս մեթոդը նպաստել վստահության բարձրացմանը: Կարծում եմ, դա հակառակ էֆեկտը կունենա:

Եվ հետո, մեր ուսումնասիրած երկրներից ես ոչ մեկում մեզ չհաջողվեց գտնել մի պարզ հարցի պատասխան. եթե թանաքանյութը կենցաղային շփումներով մեկից փոխանցվում է մյուսին, այն անձին, որը դեռ ընտրության չի մասնակցել, ի՞նչ անել թույլ տալ նրան մասնակցել քվեարկության, թե՞ ոչ:

Ես ինքս դժվարանում եմ տալ այս հարցի պատասխանը: Իսկ եթե մենք այս կարևոր հարցում չունենանք հստակ պատասխան, ուրեմն ինչպե՞ս վարվեն 16 000 հանձնաժողովականները: Դա անպայման կհանգեցնի մի նոր խառնաշփոթի:

Գիտե՞ք, երբեմն թվում է, թե կա, գտնվել է միջոցը, բայց պարզվում է, որ իրականում այն ծնում է նորանոր հարցադրումներ, խնդիրներ: Եթե մատի թանաքոտման մեխանիզմը կիրառելու ենք վստահություն բարձրացնելու համար, բայց քվեարկության օրը դրա կիրառումից կունենանք ձախողում, կստացվի, որ վստահության բարձրացմանը միտված գործիքը միանշանակորեն դարձավ շահարկումների առարկա:

-ԸՕ-ի պահանջն է՝ դրոշմակնիք դնել քվեարկած անձի անձնագրի համապատասխան էջում, սա եւս կրկնաընտրության բացառման մի մեխանիզմ է: Բայց նախորդ ընտրություններից պարզվեց, որ այս ինստիտուտն իր նպատակին չճառայեց. կնիքները կա՞մ

հենց ընտրությունից հետո ցնդում էին, կա՛մ պահպանվել են առ այսօր: Սա պատճառ չի՞ դառնա, որ հանրաքվեից հետո սկսեն աղաղակել, թե տեսե՞ք՝ կրկնակի ընտրության փաստ ենք հայտնաբերել:

-Ձեր ասածի մի օրինակ էլ ես ավելացնեմ. լսել ենք դեպքեր, երբ քվեարկությունից մի քանի օր հետո դրոշմակնիքը անձնագրից ամբողջությամբ ցնդել է, բայց ամիսներ անց նորից վերականգնվել: Մա բնական երեւոյթ է: Ինչո՞ւ, որովհետեւ մենք չենք կարող հաշվարկել, թե դրոշմակնիքի թանաքը օդում գտնվող բոլոր հնարավոր նյութերի հետ ինչպիսի փոխազդեցության մեջ կմտնի ու հետո ի՞նչ հետեւանք կունենա:

Դեռ 2012-ի համապետական ընտրությունների արդյունքների մասին զեկուցելիս նշել եմ, որ անձնագրում դրոշմակնիքը ընդամենը լրացուցիչ գործիք է, պետք չէ նրան վերագրել մեծ առաքելություն: Առաջարկեցի հրաժարվել այդ ինստիտուտից, քանի որ մեր ԸՕ-ն ունի շատ ավելի կարեւոր մեխանիզմներ:

Ընդհանրապես այս ինստիտուտն արդարացված կհամարվի այն դեպքում, եթե տվյալ երկրում չկան ընտրողների նախապես կազմված, հրապարակված ցուցակներ, եւ դրանց բացակայությունը ընտրողին հնարավորություն է տալիս մտնել ցանկացած տեղամաս եւ նորից քվեարկել: Մեզ մոտ այլ իրավիճակ է: Ընտրողը բացառապես կարող է գնալ այն տեղամաս, որի ընտրացուցակում ինքը ընդգրկված է:

Կարծում եմ, այս հանրաքվեից առաջ դեռ պետք չէ հրաժարվել անձնագրերում դրոշմակնիք դնելուց, բայց որպեսզի դա չառաջացնի որեւէ բարդություն, ապա ԿԸՀ-ն կսահմանի դրոշմակնիքի նոր ձևեր, այն կտարբերվի նախկինում կիրառվածից, բացի դրանից, նոր կնիքների վրա նշված կլինի համապատասխան ամիսն ու ամսաթիվը: Սա եւս կբացառի հնարավոր շահարկումները: